

ԱՆԱՆՅԱՆ ՍԵՐԻԿ
ԲԺՇԿԱԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵԿՆԱԾՈՒ

Ի՞նչ է ԲՐՈՒԽԵԼՈԶԸ

616.9
Q-55

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՑԵՐԵՎԱՆ

1940

ԱՆԱՆՅԱՆ ՍԵՐԻԿ

ԲԺՇԿԱԿ. ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

3 JUL 2010

616-9

Q-55

ՄՊ.

ԻՆՉ Ե ԲՐՈՒՀԵԼՈԶԸ

Z U S M T S Z R U S

ՅԵՐԵՎԱՆ

1940

12.02.2013

6626

Պատ. խմբագիր՝ պրոֆ. Ա. Ալեքսանդրյան
Լեզվական խմբագիր՝ Հ. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Լ. Ռանյան
Սրբագրիչներ՝ Ա. Արդարանյան Բ. Ղուկասյան
Կոնտրոլ - սրբագրիչ՝ Ա. Գ. Շաթրյան

С. АНАНЯН

ЧТО ТАКОЕ БРУНЕЛЛЕЗ

Гиз Арм. ССР, Ереван, ул. Ленина, 65



ב' ל

Գլավիկաբ լիսկոր՝ Բ-1049. Հրատ. № 508
Պատվիր 863. Տիրամ 1700.

Հայոց կանոնադրութեան, Ապահովանք, Բեռնական, Ակնհետ, ԶԵ

ԻՆՉ Ե ԲՐՈՒՑԵԼՈՅԸ

Բրուցելողն ընտանի կենդանիների (վոչխարների, այծերի, խոզերի, կովերի) սուր վարակիչ հիգանդություն ե, վոր առաջանում ե վորոշ տերակմանը և ներեներից (միկրոբներից):

Վերջիններս հայտնի լեն «բրուգելա» անունով։

Յերբ այդ հիվանդությունն ընտանի կենզանիների մեջ տարածվում է, մարզիկ նրանցից վարակվում են կամ կենդանիների հետ շփվելիս, կամ նրանց կաթնամթերքները գործածելու հետևանքով:

Բըուցելող հիմանդրության պատմությունը կապված է Միջերկրական ծովի շրջանի հետ։ Ծովի ափերին և կղզիների վրա (Մալթա կղզի) գտնվելիս են յեղել այդ հիմանդրության ոչախները (այսուեղից ել առաջացել ե «մալթիական տեսնդ» անունը)։ Դրա առանձին նշանները մարդկությանը հայտնի յեն յեղել վաղուց։ Ալելի ուշ ժամանակները, 18-րդ դարում, առանձին բժիշկներ տվել են այդ հիմանդրության նըկարագրությունը։

Մալթիական տեսդի իսկական պատմությունն սկսվում է 19-րդ դարի յերկրորդ կեսից, յերբ Մալթա կղզում, անգլիական զինվորների մեջ, այդ հիմքության գեղքեր արձանագրվեցին, իսկ 1887 թվին անգլիական գիտնական Բրյուսը հիմքանդ հա-

վաստու արյան մեջ գասավ մալթիական տեսնգ հիվանդության հարուցիչ միկրոբը (կենդանի եյտկ ե, վար հաստրակ աչքով մարդուն տեսանելի չե, նրան կարելի յե տեսնել միայն մեծացնող գործիքի—միկրոսկոպի միջոցով), այդ միկրոբը կոչվեց մալթիական միկրոկոկկ, վորովհետև միկրոսկոպի տակ նա ունի մանր կոկկերի, գնդիկների տեսք, և այժմ ել գիտնական Բրյուսի անուով այդ հիվանդությունը կոչվում երուցելով:

Հիվանդության միկրոբը գտնելուց հետո անհրաժեշտ եր վորոշել թե վճրտեղից և առաջ գալիս վարակը:

19-րդ դարի վերջերում կոնդոնից ուղարկվեց հատուկ բժշկական գիտական հանձնաժողով՝ վորը յերկար տարիներ Մալթա կղզում ուսումնասիրում եր միջավայրի բոլոր պայմանները (ջուրը, ողը, հողը և այլն), վորպեսզի վարակի ոջախները բնության մեջ, բայց վոչինչ չեր հաջողվում՝ մինչև վոր պատահական կերպով բժիշկ Զամմետին հաջողվեց գտնել, վոր Մալթայի այծերը վարակված են բրուցելողով:

Վարակված այծերն այդ միկրոբներն արտադրում եյին իրենց կաթի միջոցով. արանից հասկանալի յեր, վոր անգլիական զինվորներն այդ հիվանդությունով վարակվում են հում կաթ գործածելով:

Այդպես որինակ, 1907 թվին Մալթա կղզում արձանագրված եր վինվորների մեջ հիվանդության 643 դեպք, իոկ 1907 թվին, այծի հում կաթն արգելելուց հետո արձանագրվեց հիվանդության միայն 7 դեպք:

Հետագա ուսումնասիրությունները պարզեցին, վոր մալթիական տեսնգ հիվանդությունը գտնվում ե մանր

յեղջերավոր անասունների՝ այծերի և վոչիարների մեջ, այդ հիվանդությունը դրանց մոտ արտահայտվում է նախածննդյան շրջանում տեղի ունեցող վիճումներով:

Անկախ այդ հիվանդության գոյությունից անասունաբուժները զիսերին խոշոր յեղջերավոր անասունների մի ուրիշ վարակիչ հիվանդություն ես (Բանգի հիվանդություն, կամ բնփեկցիոն արորտ) վոր վիճումներ եր առաջ բերում կովերի մեջ: Դրա հարուցիչը Բանգը և Սարիբոլաք գտել եյին 1897 թվին՝ վիճում ունեցած կովի սաղմը շրջապատող հեղուկի մեջ:

1914 թվին խոզերի վիճումների ժամանակ գիտնական Տրաումը գտավ մի միկրոբ, վոր չափազանց նմանվում եր Բանգի գտած «բնփեկցիոն արորտի» միկրոբին:

Սակայն այդ յերեք տեսակի հիվանդություններն ուսումնասիրվում եյին վորպես առանձին հիվանդություններ, յերբեք համեմատության չեյին զրվում միմյանց հետ, մինչև վոր ամերիկական գիտնականունի Ալիսա Եվենը մանրակրկիտ ստուգեց այդ յերեք հիվանդությունների հարուցիչները և յեկավայն յեղբակացության, վոր միկրոբների այդ յերեք տեսակները չափազանց նման են միմյանց թե՛ ըստ իրենց արտաքին ձևի և թե՛ ընդունակություններով՝ բրուցելողով հիվանդ մարդու արյան շիճուկի հետ առական ռեակցիա և այդպես ել կոչվում ե Ռայտի ռեակցիա:

Ալիսա Եվենսին հաջողվեց հղի կովին վարակել մալթիական միկրոկոկով (վոչիարների հիվանդության հաջուցիչով) և վիճում ստանալ:

Մի շարք ուրիշ գիտնականների ուժեղով հաջողացեց ապացուցել, վոր հնաբավոր և վոչ միայն խոշոր յեղերավոր անառուններին վարակել մալթիական միկրոկոկկով, այլ և ընդհակառակը, մարդու ընդունակ և վարակվելու բրուցելողի յերեք տեսակի միկրոբներով ել:

Դիտնականները շարունակում են այդ հիվանդության միկրոբի ուսումնասիրությունը և յեկան այն յեղակացության, վոր տարբեր կենդանիներից բրուցելողավ վարակվելը միատեսակ չի ընթանում մարդու համար—խոշոր յեղերավոր անառունների և խոզերի բրուցելողը համեմատարար ավելի քիչ և վտանգավոր (վարակիչ) մարդու համար, առաջ և բնում հիվանդացման հազվագյուտ գեղեցեր, այնինչ մանր յեղերավոր անառունների (վոչխարճների, այծերի բրուցելողը) չափազանց վարակիչ և մարդու համար, յերեմն կրում և համաձարակի բնույթ:

Բացի դրանից պարզվեց, վոր մարդը բրուցելողով վարակվում և վոչ միայն աղեստամոքային հանապարհով, գործածելով վարակված այծերի, վոչխարների և կովերի կաթնամթերքներ, այլ և վարակր կարող և անցնել մարդու ներսը նաև մաշկի ու լորձաթաղանթների միջով, յերբ մարդը շփվում է հիվանդ կենդանիների և նրանց արտաթորությունների հետ (հովիվներ, անասնաբուժներ և այլն):

Հարուցիչ միկրոբի տոկությունը գրությունում

Բրուցելողի միկրոբն ուժեղ կենսունակություն ունի: Նա ընդունակ և մնալու արտաքին միջավայրի պայմաններում, նա ապրում է կաթի մեջ 21 որ, աղ դբած բրինձա պանրի մեջ 15—45 որ, յուղի մեջ 20 որ, ջրի մեջ 10—72 որ, փոշու մեջ 30 որ, խոնավ հողի ու գոմաղբի մեջ մինչև 72 որ:

37 աստիճանի չորացումը բրուցելողի միկրոբներին սպանում և 2 որում, 55 աստիճանի ջերմությունը՝ 1 ժամում, 70 աստիճանի ջերմությունը՝ 8 րոպեյում, 80 աստիճանի՝ 2 րոպեյում:

Յեթե վորեւ տնտեսությունում բրուցելողի հիվանդություն և առաջ գալիս, նրա զեմ պայքարելու գործում հըսկայական նշանակություն ունի դեղինֆեկցիան—շենքերի, հողի, գոմաղբի և այն բոլոր իրերի ախտահանությունը, վորոնք կարող են վարակի աղբյուր հանդիսանալ, ըստ վորում պետք են մանաւ, թե վոր գեղցում ինչ գործածել:

Զանազան գիտնականների փորձերը տվել են հետևյալ արդյունքը՝ $20/_{\text{o}}\text{-ոց}$ կարբույան թթուն բրուցելայի միկրոբներին սպանում և անմիջապես, իսկ $0, 50/_{\text{o}}\text{-ոց}$ լիզուլը՝ 1 րոպեյում, $0, 20/_{\text{o}}\text{-ոց}$ ֆորմալինը միկրոբներին սպանում և անմիջապես, սուլեմայի $1 : 10, 000$ լուծույթն սպանում և իսկույն, իսկ $50/_{\text{o}}$ անոց գլորակիրը՝ 50 րոպեյում: Ուրեմն շենքերի գեղինֆեկցիայի համար կարելի յե առաջարկել $20/_{\text{o}}$ անոց կարբույան թթու, $0, 50/_{\text{o}}$ անոց լիզուլ իսկ հողի և գոմաղբի հականեխման համար քլորակիր, կամ $50/_{\text{o}}$ անոց թարմ կիր (վերցնել մոտ կես կիլո կիր և ավելացնել չուր):

6

7

ԲՐԱՅԵԼՈՂԻ ՏԱՐԱ-
ԾՈՒՄԸ ՍԱՀԻՄԱ-
ԵԱՄԵՐՃԱ ՅԵՐԵՐ-
ԵՆԵՐՈՒՄ ՅԵՎ
ԽՍՀՄ-ՈՒՄ

Անցյալներում կարծում եյին,
թե բրուցելողը տարածված է
միայն տաք, հարավային շրջ-
աններում (Մալթա կղզում,
Միջներկրական ծովի ափերին
և այլն) բայց հետագայում
պարզվեց, վոր նա թե մարդկանց, թե կենդանիների
մեջ գոյություն ունի նաև բարեխտուն, նույնիսկ
ցուրտ կլիմայական պայմաններում:

Բրուցելողը մի հիմնդություն է, վոր տարած-
ված է յերկրագնդի բոլոր մասերում:

Յերկրագայում նա տարածված է Միջներկրական
ծովի կղզիներում, Խոտլիայում, Ջրանսիայում, Պոր-
տուգալիայում, Խոպանիայում, Հունաստանում, Գիր-
մանիայում, Շվեյցարիայում, Անգլիայում:

Բրուցելողը տարածված է նաև Միջին և Հարա-
վային Աֆրիկայում, Ամերիկայում (Կանադա, Հյու-
ստանին և Հարավային Ամերիկա):

Ասիայում — Փոքր Ասիայում, Միրիայում, Պա-
ղոստինում, Թուրքիայում, Իրանում, Հնդկաստանում,
Չինաստանում, Ֆիլիպինյան կղզիներում:

Մարդու բրուցելողի հիմնդության պատահական
դեպքեր արձանագրված են, այն ել վոչ լրիվ: Արի-
նակ Դանիայում 1927—28 թ. թ. մարդկանց մեջ հայտ-
նաբերված են 500 դեպք, Գիրմանիայում 1929—30 թ. թ.
արձանագրված են 627 դեպք, Ամերիկայում՝ միայն
1930 թվին 2365 դեպք, Ֆրանսիայում, վորը հան-
դիս մնում է մասր յեղջերագոր անառնարուծության
վայր, 90 շրջաններից 75-ում տարածված է բրուցե-
լու: Վերոհիշյալ թվերը ցույց են տալիս միայն ար-

ձանագրված դեպքերը, իրականում հիմնդությունն
այս յերկրում ավելի մեծ չափերի յև հանում:

ԲՐԱՅԵԼՈՂԻ
ԽՍՀՄ-ՈՒՄ

ԽՍՀՄ սահմաններում այդ հի-
մանդությունը նկատվում է
մեծ մասամբ վոչխարարու-
ծությամբ զբաղվող վայրե-
րում, սակայն վերջին տարիներս բրուցելողի ուժե-
ղացում և նկատվել է ուրիշ վայրերում, որինակ Ու-
րալի մարդում, Արևմտյան Սիբիրում, մերձվոլգյան
շրջանում, և այլ տեղեր:

Անդրկովկասում այդ հիմնդությունը հայտնա-
րիվել է առողջին անգամ 1922 թ. Ազրբեջանում,
հետագայում, 1923 թ. այդ հիմնդությունն արձանա-
գրվեց և. Հայաստանում և ապա Վրաստանում:

Հայկական ԽՍՀ-ում բրուցելողի վորոշ բոնկում
մարդկանց մեջնկատվել է 1923—25 թ. թ. այսուհետեւ
այդ դեպքերի թիվը սպականել է: Վնասաբարության
հատկանքով 1930—33 թվականներից գարձյալ սկսվում
է բրուցելող հիմնդության տարածումը թե կենդա-
նիների և թե մարդկանց մեջ:

Մարդկանց մեջ բրուցելողը տարածված էր անառ-
նաբուծական ֆերմաններում, կոլտնահսություննե-
րում, անառնաբուծական խորհունակություններում
(նախկին Արտզդայանի խորհունակություն, Ալա-
գյաղի, Լոռվա խորհունակություններ և այլն):

1933 թ. մինչև 1936 թիվը Հայկական ԽՍՀ-ում
լարուածոր ձևով արձանագրված են կենդանիների
և մարդկանց բրուցելողի բավականաչափ դեպքեր, իսկ
1937 թվին նորից առաջ եր յեկել այդ հիմնդու-
թյան աշխատացում, վոր հիմնականում պետք ե վե-

բագրել գյուղատնտեսության առաջարեղում կատարված մասարարությանը:

Բրուցելով հիվանդության արտահայտումը՝ չեզ ընթացքը

ինչպես առացինք վարակված վոչխարները և նրանց արտաթորությունը մարդկանց համար հանդիսանում են բրուցելողով վարակվելու հիմնական աղբյուր:

Ամեն մի վարակի ընթացքը հիմնականում կախված է յերկու գլխավոր պայմաններից. հիվանդություն առաջ բերող միկրոբի ախտածին հատկությունից (ուժեղությունը, թունավոր հատկությունը) և մարդու մարմնի դիմագրողականությունից. վորքան բարձր և միկրոբի թունավոր հատկությունը և ցածր որդանիքմի դիմագրողականությունը, այնքան ծանր և ընթանում հիվանդության ընթացքը, և ընդհակառակը:

Որպանիզմի դիմագրողականությունն իր հերթին բնորոշվում է այն ողց-տնտեսական պայմաններով (սննդի, բնակարանի, աշխատանքի և այլն), վորոնցում ապրում և տվյալ անհատը:

Նայած հիվանդության ընթացքին՝ բրուցելողը լինում է յերեք տեսակի:

1) Դաղտնի, կամ չնշված ձեզ, յերբ որպանիզմի ներսում վարակ կա, բայց չի արտահայտվում, վորովհետև որդանիզմի դիմագրողականությունը նրան հաղթում է, վարակը հայտաբերվում է միայն արյան շիճուկի հետազոտման ժամանակ (այդ տեսակը լինում է հաճախ հովիճսերի, կթողների, անասնաբուժական և լաբորատորային աշխատողների մոտ):

2) Ամբողջատոր տեսակը, յերբ հիվանդն ունենում է չնչին տաքություն 37,2⁰ 37,4⁰, հիվանդը գանգատվում է մարմնի ընդհանուր ջարդվածությունից, թուլությունից, հոդացավից, բայց նրա ընդհանուր դրությունը մնում է բավարար վիճակում և նա աշխատանքից չի կարվում:

Հիվանդի այդպիսի վիճակը բրուցելողի այդ յերկու տեսակի ժամանակ ել բացատրվում է միկրոբի թուլությունով, բայց որդանիզմի թուլացման գեղագում հիվանդությունը կարող է ծանր ընթացք ընդունել:

3) Բրուցելողի կլինիկական արտահայտված տեսակը, յերբ կան հիվանդության բոլոր գլխավոր նշանները և կարիք և զգացվում հիվանդին պառկեցնելու շիփանդության այս տեսակը զարգանում է միանգամից վոչ հաճախ. հիվանդությունը ձեավորվում է դանդաղորեն, կամաց կամաց, հիվանդության գաղտնի շրջանը տեսում է մեկ շաբաթից մինչև 2—3 շաբաթ, յերբեմն ավելի շատ, մինչև մեկ տարի:

Մարդու որդանիզմում բրուցելողի հարուցիչը կարող է գտնվել արյան մեջ, ավշային գեղձերում, փայծաղում, վառկրուղեղում, մյուս որդաններում: Առաջին տեղը բռնում են փայծաղը, արյունը և գեղձերը: Վորովիետն միկրոբը տարածվում է ամբողջ որդանիզմի մեջ, ուստի նրան հայտնաբերել հաջողվում է նաև հոդապարկի հեղուկի մեջ, հոդերի բորբոքման ժամանակ, կերակրող կնոջ կաթի մեջ, նաև հիվանդի մեզի մեջ:

Այս հիվանդության նշանները բազմազան են:

Արտահայտված ձեր մշտական նշաններից մեկը հանգիսանում և ջերմությունը, վոր լինում և հիվանդության ամրող ընթացքում, յերբեմն ժամանակավորապես ընդուժումներ տալով: Զերմության կորագիծը սովորաբար լինում է ալիքաձև, ջերմաստիճանի տառանումները 36-ից մինչև 41 աստիճան, տաքությունը սովորաբար սկզբում է բարձրանալ յերեկվա ժամը 2-ից, կամ 4-ից, ընկնում և առավոտները, յերբ հիվանդն սկսում է ուժեղ կերպով քրանել: Այդ յերեսույթը յերբեմն այնպես և տանջում բրուցելողով հիվանդին, վոր նաև որվա ընթացքում 5—6 անգամ փոխել և տալիս իր սովորակեղենը:

Չնայած բարձր ջերմաստիճանին հիվանդի ինքնառպացությունը և ախորժակն սկզբում շատ լավ է լինում, վորի շնորհիվ այդ հիվանդությունը հնարավոր և տարրերել մալարիայից և վորովայնի տիֆից, վորոնց ժամանակ հիվանդի զրությունը հենց սկզբից ձանր և լինում:

Բրուցելողի հետեւյալ նշանը ձեռքերի և վոաքերի վոսկրացավն է, հօդացավը, հողերի պարկերի բորբոքումը, վոր սկզբում և մեծ հողերից ապա անցնուած մանրերին, ցավերը հաճախ կրկնվում են և յերբեմն այնպես ուժեղ, վոր թե հիվանդի և թե բժիշկ ամբողջ ուշադրությունը կենարունանում է այդ յերեվույթի վրա և աչքից վրիպում են հիվանդության մյուս նշանները:

Դրան միանում են բարզություններ ներկային համակարգության կողմից, հիվանդը տառապում է անքնությունից, շուտ-շուտ և առանց պատճառի զրբղություն, ջղայնանում, առաջ են գալիս նեվրիաներ կո-

զերի ուղղության, նեվրիաները բարդանում են խոշոր ներկերի բորբոքումով (իշխաղ), վորի հետևանքով հիվանդը կամ բորբոքին չի կարողանում քայլել, կամ կաղում է, ման և գալիս փայտի ոգնությամբ:

Փայծաղը և լյարդը հաճախ միծանում են, այնքան վոր շոշափվում են:

Հիվանդացած տղամարդկանց մոտ կարող է առաջնալ ձվիկների բորբոքում:

Կանանց մոտ նկատվում է սեռական գործարանների բորբոքում, զաշտանի անկանոնություն, յերբեմն կրծքային զեղձի բոլ բորբոքում:

Աղեստամոքսային սիստեմում զգացվում են՝ ցավեր վորավայնի շրջանում, ամրություն, վոր հաճախ փոխարինվում և լուծով:

Առաջանում է ընդհանուր արյունապակասություն, սիրտն արագ և գործում, զարկերակն արագ և խիստ:

Բրուցելողի յերեսույթները լի-

Բրուցելողի տարբերությունը մյուս վարակիչ հիվանդություններից

նույն հն տարրեր, ա) հաճախ բարձր ջերմաստիճանը հարագում և ձիվանդին պահել թույլ պահքով (զիկատայով), կարծելով, թե զործ ունեն վորվանի տիֆի հետ (այնինչ անհրաժեշտ է հենց սկզբից լավ կերակրել այդպիսի հիվանդներին), բ) մյուս զեպքում հողացավերի հետևանքով, սրան բուժում են վորպիս հողացավով հիվանդի, գ) յերբորդ զեպքում բարձր ջերմաստիճանը և մեծացած փայծաղն ըստեղծում են մալարիայով հիվանդի տպավորություն, դ) չորրորդ զեպքում անընդհատ ջերմաստիճանը և հի-

վանդի հաճախ քրտնելը տուբերկուլյոզի մասին և
մտածել տալիս:

Բրուցելողն այդ թված հիվանդություններից տար-
բերել և հաջողվում նրանով, վոր հիվանդության ըն-
թացքն ունի վորոշ առանձնահատկություններ և, վոր
գլխավորն ե՛ հնարավոր և հիվանդության գոյությունը
վորոշել, որպաշտով արյան շիճուկի քննությունից
(Բայտի ռեակցիա), արյունը ցանելուց, վորպեսզի ըս-
տանան հիվանդության հարուցիչ միկրոբների աճը,
և դնելով մաշկային փորձ (Բյուռնեյի ռեակցիա) նա-
խաբազկիների մասում.—դրական լինելու դեպքում 24
ժամվաքնից քում սրակած տեղն առաջ ե զալիս կարմ-
րություն, ուռուցք, ցավազգացություն, ջերմություն:
Ամեն մի բրուցելողով հի-
վանդաշխատունակությունից
զրկվում և 3—6—7 ամիս,
յերբեմն մեկ տարի, նայած
մարդու որդանիլմի դիմա-

Հիվանդության
Տեսողականու-
թյունը

գրողականությանը և վարակի տեսակին, ինչպես
տեսնում ենք, դա մեզ համար մեծ սոցիալական չա-
րիք ե, չնայած նրան վոր, մահացությունը մեզ մոտ չա-
փազանց ցածր և մարդը մարդուն բրուցելողով չի
վարակում:

Մի անգամ բրուցելողով հիվանդանալը մարդու չի
պաշտպանում կրկնակի վարակվելուց (նման չե կար-
մը ըստ կին, ծաղիկին և մի քանի այլ հիվանդությունների, վորոնցով կյանքի մեջ հիվանդանում են միայն
մեկ անգամ): Այդ նշանակում ե, վոր բրուցելողը,
ինչպես և մալարիան ու տուբերկուլյոզը, չի տալիս

մարդի կայուն դիմագրողականություն (իմմունի-
տես), վորոշ շրջանից հետո առողջացած մարդը յեն-
թակա յէ կրկնակի վարակման:

Բրուցելողի
բուժումը

Այս հիվանդությունը յուրա-
հատուկ բուժում չունի, կամ
ավելի ճիշտ՝ այդպիսին (բրու-
ցելողի սպանած միկրոբների
լուծույթով բուժումը) գեռ կանոնավոր չի մշակված,
տարբեր գիտնականներ առաջարկել են տարբեր ձեի
բուժում. ամենից երականը հանդիսանում է լավ
ոնունզը և ոդափոխությունը:

Զերմությունն անցնելուց հետո բրուցելողի հե-
տագա բարդությունների շրջանում (յերբ գեռ շարու-
նակվում են հոգացավերը և ներքիտները) շատ լավ
արդյունք և տալիս ջրային բուժումը, վաննաներ,
դուշեր, հատկապես հանքային ջրերի՝ ծծումբային
վաննաները և ցեխերը շատ լավ են ոգնում բրուցե-
լողով հիվանդներին (Պյատիկորսկ, Թբիլիսի և
և այլ տեղեր):

Կենդանիների
բրուցելողը

Բանի վոր մարդկանց բրու-
ցելողի տարածումը կախված
է անմիջապես կենդանինե-
րի հիվանդացումների հետ,
համառոտակի կանգ առնենք և կենդանիների բրուցե-
լողի վրա:

Թե վորքան լայն և տարածված այս հիվանդու-
թյունը կենդանիների մեջ, կարելի դատել հետևյա-
լից. Ֆրանսիայի, Իտալիայի և Իսպանիայի շրջան-
ների մեծագույն մասի կենդանիները վարակված են
բրուցելողով, Ամերիկայում 56 միլիոն գլուխ կենդա-
բրուցելողը,

Նիներից 10 միլիոնը հիվանդ են բրուցելողով, իսկ
գերմանիայում վարակված են կենդանիների 20%՝

Հիվանդության
ընթացքը

Հիվանդության ընթացքը:
կենդանիների մոտ տարբեր-
փում և մարզկային բրուցե-
լողից:

Վոչխարների և այծերի մոտ նախաձննդան շրջա-
ռում հղի կենդանիների 30—40, յերեմն 50%՝
սկսում են վիժել: Սովորաբար դա լինում է միայն
մեկ անգամ, հիվանդության սկզբին: Այնուհետև
կենդանու հիվանդությունը շարունակվում է, բայց
նու այլին չի վիժում, առկայն ծնված զառների 15%՝
լինում են վոչ կենսունակ, մահանում են լուծից:
Հիվանդության մյուս նշաններն են՝ կենդանու պտուկ-
ների և աչքերի լորձաթաղանթների այսուցը և կարմ-
րությունը, փոտքի հողերի և հոգալարկերի լորրո-
քումը, իսկ առու կենդանիների («զոչերի», ցուլերի)
ձվիկների լորրոքումը:

Վարակված կենդանիները միկրոբներն արտադ-
րում են կաթի և մհղի հետ: Առողջ կենդանու վա-
րակվելը տեղի յեւ ունենում է հիվանդ արտադրողից
(«զոչից») բերմանափորիվելու ժամանակ, կթողների միջու-
ցով, կամ յիթե կերը աղտառված է հիվանդ կենդա-
նիների մհղով, վիժում կենդանու հիշտոցային լոր-
քունքով և այնու...

Խոշոր լիղջերափոք անասունների բրուցելողն ար-
տահայտվում է անսպայման վիժումներով (այսուղից
և Բանկի «ինֆեկցիոն արորտ» հիվանդության աշ-
նունը):

Նոր վարակված նախաճներում վիժումները կա-
մաց-կամաց շատանում են, այնպես վոր 2-րդ, 3-րդ
տարին բոլոր անասունները վիժում են, իսկ հետա-
գայում վիժումների քանակը նվազում է:

Սովորաբար վիժումները տեղի յեւ ունենում հղիու-
թյան 6-րդ, 7-րդ ամիսներին, այդ կահված է նրա-
նից, թե միկրոբը վարքան ուժեղ աղդեցություն և
զործել կենդանու սնուական գործարանների վրա:

Միկրոբն սկսում է ուժեղ զարգանալ հղի անտ-
առնի զավակատան մեջ, գրանից առաջանում է լոր-
ձաթաղանթների, ինչպես և սպոմի մասների բորբո-
քում, վորի հետեանքով մոր ու սաղմի միջի յիղած
կապն ընդհատվում է և տեղի յեւ ունենում վիժում:

Հիվանդության ընթացքում կովերի մոտ նկատ-
վում է ջերմաստիճանի բարձրացում, ախորժակի ի-
ջեցում, աչքերի լորձաթաղանթների կրկնակի բոր-
բոքում, յերբեմն և հոգերի բորբոքում:

Յուլերի բրուցելողն ընթանում է ձվերի բորբո-
քումով, թեղմանափորիլիս նրանք կարող են վարակել
առողջ կովերին:

Հիվանդանում են նաև ձիերը, ուղակերը, եշերը,
զերչին տարիները ձիերի մեջ բորցելողի հիվան-
դություն հաճախ և նկատվել է աղցարցված են դիոլ-
քեր, վոր մարզն ել վարկվել և նրանցից:

Խոզերի բրուցելողը վիժման ավելի քիչ տոկոս և
տարիս (20—25%), նրանք վարակվելիս շուտ են ա-
ռողջանում, բայց մարզն համար վարակվելու տե-
սակետից խոզերի բրուցելողն ավելի վտանգավոր է,
քան թե կովերինը, մյուս կողմից խոզերը կարող են

վարակվել վոչխարի միկրոբներով, յիթև ուսում են վիժած կենդանիների սաղմը, ընկերքը և թաղանթաները (վորոնք լցուն են միկրոբներով) վոր հաճախ չեն հորում, այլ թողնում են հենց ընկած տեղը:

Շները նույնպես վարակվում են բրուցելողով և կարող են վարակել ուրիշներին:

Կենդանիների հիվանդությունը վորոշում են այնպես, ինչպես մարդկանցը—արյան շիճուկի քննության և մաշկային ռհակցիայի միջոցով:

Բրուցելով հիվանդության վարակի փոխանցման լեզուարագությունը մարդու մոտ:

Առոր, ապայմաններում վարակը տեղի յեւ ունենում յերբ
1) շփում են վարակված կենդանիների հետ—նրանց խնամելիս, կերակրելիս, 2) կենդանիների վիժումների ժամանակ, 3) վարակված կենդանիների և մարդկանց ազտոառությունից, 4) մօխ հումույթի հետ շփման ժամանակ (մորթելիս, մաշկելիս), 5) վարակված կենդանիների հում կաթը և կաթնամթերքները գործածելիս, 6) հիվանդ կենդանիների արտաթորություններով ազտոառած մրգից ու բանջարեղենից, 7) վարակված գոմաղրից, հողից ու ջրից:

Վարակման առաջին ճանապարհը սննդամթերքներն են՝ հիվանդ վոչխարի հում կաթից պատրաստած բրինձա պանիրը, վարակված կենդանու հում կաթն ու սերը գործածելը:

Վարակված վոչխարի հում կաթից պատրաստած պանիրը, յիթև նա բավականաշատ պահպած չի ազաշը մեջ, հանդիսանում ե քաղաքների բնակչության բրուցելողով վարակվելու հիմնական աղբյուրներից մեկը:

Վարակման յերկրորդ ճանապարհն անմիջական շփումն ե կենդանիների հետ (ովկիֆսեր, կթողներ):

Բոլոր գեղքերում վարակումն ավելի արագ ե տեղի ունենում, յերբ մարդու մաշկի ամբողջականությունը խախտված է, կան քերծվածքներ ու վերքեր, թեպետ հիվանդության հարուցիչը կարող ե մարմնի ներսն անցնել նաև չվնասված մաշկից:

Թե կենդանիների կաթը վորակակված լինում կարելի յեւ յեղքակացնել հետևյալից, վարակված կենդանիների 60⁰ օը կաթի հետ բրուցելաներ են արտադրում: Մեկ խորանարդ սանտիմետր կաթի մեջ միկրոբների քանակը հավասար է 50,000-ի, ուրեմն մեկ քածակ կաթում 10 միլիոն միկրոբ կա: Դա ցույց է տալիս, թե բրուցելողի վարակի հիմնական վայրերում հում կաթ խմելը փորքան վտանգավոր է:

Բրուցելողով հիվանդացումը կարող է տեղի ունենալ ամբողջ տարվա ընթացքում, բայց ավելի շատ հիվանդացումներ լինում են գարնանը և ամառվա ամիսներին, այդ կապված է կենդանիների ծնելու և վիժելու ժամանակի հետ, յերբ վարակի տեսակետից ստեղծվում է վտանգավոր շրջան, մյուս կողմից գարնան և ամառվա ամիսներին կենդանիներն ավելի շատ կաթ են տալիս և մարդիկ ավելի շատ կաթնամթերք են գործածում, քան թե տարվա մյուս ժամանակիները:

Հիվանդության տարածումը կախված էարգելության ամենակարևոր գործունեությունը կաթի շատ հիվանդացումներ լինում են գարնանը և ամառվա ամիսներին, այդ կապված է կենդանիների ծնելու և վիժելու ժամանակի հետ, յերբ վարակի տեսակետից ստեղծվում է վտանգավոր շրջան, մյուս կողմից գարնան և ամառվա ամիսներին կենդանիներն ավելի շատ կաթ են տալիս և մարդիկ ավելի շատ կաթնամթերք են գործածում, քան թե տարվա մյուս ժամանակիները:

Լավագության տարածումը կախված էարգելության ամենակարևոր գործունեությունը կաթի շատ հիվանդացումներ լինում են գարնանը և ամառվա ամիսներին, այդ կապված է կենդանիների ծնելու և վիժելու ժամանակի հետ, յերբ վարակի տեսակետից ստեղծվում է վտանգավոր շրջան, մյուս կողմից գարնան և ամառվա ամիսներին կենդանիներն ավելի շատ կաթ են տալիս և մարդիկ ավելի շատ կաթնամթերք են գործածում, քան թե տարվա մյուս ժամանակիները:

Վարաեված մարզն
իբրեւ վարակի աղ-
բյուր

Կարժգ և արդյոք վարակված
մարդը վարակի աղբյուր հան-
դիսանալ իրեն շրջապատով
կենդանիների համար—ոյու,
կարող ե, հիշենք, վոր հի-
վանդ մարդու մեզի մեջ վարակն առաջ ե գալիս
հիվանդության 17-րդ որից և շարունակվում է ար-
տադրվել շատ յերկար ժամանակ, յերբեմն 1—2 տա-
րի նույնիսկ նրա առողջանալուց հետո: Այդ տեսա-
կիտից մեծ նշանակություն ունի այն առաջարկը,
վոր արվում ե, վարակված հոգին կցել վարակված
վոչխարներին և ընդհակառակ՝ առողջ հոտին տալ
առողջ հովիս:

Հիվանդ մարդն անմիջական շփման միջոցով չի
վարակում մի ուրիշին, բրուցելողով հիվանդները չեն
մեկու ացյլում, պահվում են մյուս հիվանդների հետ
ընդհանուր պալատներում և դա միանդամայն անվ-
տանդ ե:

Տարիքը յեվ ածխա-
տանքի բնույթը
Սովորաբար բրուցելողով հի-
վանդանում են միջին հասա-
կի մարդիկ (15—50) տարե-
կան): Կախված աշխատանքի
բնույթից՝ կանայք տվելի քիչ, քան տղամարդիկ:
Հօտ տվյալների հիվանդների 72,8% ը կազմում են
տղամարդիկ, 27,2% կանայք:

Ծծկեր հասակի յերեխաները բրուցելողի վարովի
դեմ հայտաբերում են տոկունություն, հիվանդ մոր-
կաթից ծծկեր յերեխան հաղվագյուտ դեպքում և հի-
վանդանում, բայց վորքան հասակն ավելի մեծ եր-
այնքան ավելի յեն յենթակա վարակի:

Մեծ գեր և խաղաւմ նաև աշխատանքի բնույթը:
Որինակ՝ բրիգադիր հովիմները, վորոնք անմիջական
ոգնություն են հասցնում ծնող կենդանիններին,
շփում են վիճակ սաղմի, լորձաթաղանթների և
այլ արտաթորանքի հետ, ավելի շատ են յենթակա
վարակի:

Վարակի տեսակետից առաջին տեղը բոնում են
հովիմները 420%, անսանաբուժական պերսոնալը, ա-
պա լաբորատորիաների աշխատողները, վոր գործ
ունեն կենդանի միկրոբների հետ և ապա այլ մասնա-
գիտությունները:

Աշխատունակու-
րյան կորուսը
բրուցելողի ժա-
մանակ

Թեպետ բրուցելողով հիվանդ-
ների քանակը սովորաբար
շատ չե, բայց այդ հիվանդու-
թյան հետևանքով կորցրած
որերի ընդհանուր քանակը հա-
վասարվում ե այնպիսի հիվան-
դություններին, ինչպիսին են մալարիան և վորվայ-
նային տիֆու (այսպես, որինակ, մեզ մոտ, Տրոպինս-
տիտուսում 41 հոգի բրուցելողով հիվանդ բուժե-
լու համար զբաղեցված և 2263 հիվանդանոցային
որ):

Բրուցելողի գեմ պայքարը պետք է տարվի ու-
ժեղ թափով պետական և հասարակական միջոցնե-
րով, ինչպես դա կատարվում և մալարիայի, տու-
բերկուլյոզի և այլ ինֆեկցիոն հիվանդությունների
դեմ:

Թրուցելողից նախազգութանալը յեվ պայքարը երա զեմ

վերոհիշյալ տվյալնելից յերեսում ե, վոր բրուցելովը հանդիսանում և մեծ չարիք ինչպես բնակչության, նույնական և ժողովրդ սկան տնտեսության համար:

Թյան համար:

Անկասկած ե, վոր նրա զեմ պայքարի ձեռնարկութերը պետք են գնան զուգընթացարար բժշկաւանիտարական և անասնաբուժական—սանիտարական գծով:

Առողջապահության գծով պայքարը տարվում է անհատական և հասարակական միջոցներով:

Անհատականը—գործածել միմիայն յեռացրած կաթ, բրինձա պանիրը լավ աղ գնել հետո միայն ոգտագործել պատահական տեղերից վերցրած կաթնամթերքներ չոգտագործել, կենդանիների հետ շփում ունենալու դեպքում զգուշ և ուշացդիր լինել, ոգտվել արտահագուստից, ձեռքերը լվալ հաճախակի և առհասարակ մաքրություն պահպանել:

Հասարակական նախազգութացման միջոցները հետեւյալն են, 1) պաշտպանել շվման միջոցով վարակվելուց, ա) անասնաբուժական ֆերմաների և խորհրդատեսությունների աշխատող ձեռքերը բավարարել արտահագուստով (ոետինե ձեռնոցներ, կրկնակոշիկներ, ոետինե գոգնոցներ), սապոնով և ախտահանիչ նյութերով; բ) Կենդանիների վիճումների և ծնման շըջանում գոմերն ախտահանել քլորակրով, պարտադիր կերպով հորել, իրենք չափազանց վարակիչ վիժառազմը, նրա թաղանթները և ընկերքը; գ) Բրուցելովից

վոչ առողջ հպատերին չկցել առողջ հովիվներ, այլ միայն հիվանդներին:

2) Կենդանիների գծով կատարել անառնաբուծական հոտերի «սանացիա»—առողջացում, արյան շիճուկի քննության միջոցով ջոկել առողջներին հիվանդներից և վերջիններին տալ առանձին զոմեր, արտատաեղեր, ինամոր պերսոնալ, զտել և առանձին աճեցնել վոչիարների ու կովերի նորածիններին, վորոնք ավելի տոկուն են բրուցելովի հանդեպ, իսկ հիվանդ կենդանիները հատկացնել մռամթերման պլանին:

3) Կաթնամթերքների միջոցով վարակվելուց պաշտպանելու համար.

ա) կազմակերպել շուկաների մատակարարումը միայն պատուերիզացիայի յենթարկված (1 ժամ-70 առտիճանի տաքացրած) կաթով, իսկ առանձին անհատների թույլ տալ վաճառել կաթը, յեթե կթվող կենդանու արյունը պարբերաբար տուգվում ե բրուցելովի վերաբերյալ; բ) Վարակված կամ կասկածելի տընտեսություններում կարագը պատրաստել վոչ թե կաթի սերից, այլ մածունից; գ) Բրինձա պանիրը, ինչպես և մյուս մթերքները պատրաստել միայն պատերիզացիայի յենթարկած կաթից (մինչև 70—80 առտիճան տաքացրած; դ) Այն դեպքերում, յերբ պանիրը (Առժողկոմատի և Սննդի ժողկոմատի թույլավությամբ) պատրաստվում է վոչ-յեռացրած կաթից, անհրաժեշտ և պանիրը շուկա հանելուց առաջ 2—3 միա պահել աղաջրի մեջ:

Մնադի ժողկոմատի գծով բաց թողնել հատուկ հրահանդիպությունը վարակված շրջաններում կաթ-

Նամթերքները պատրաստելու և պահելու մասին:
Այսն մի բրուցելողի հիվանդության գեղքում
հառուկ քարտով հայտնել տեղի առողջապահության
մարմիններին:

Այդ հիվանդությունը լայնորեն պարզաբանել դա-
սախոսություններով, զրույցներով, ուղիոնադոր-
դումներով, բաց թողնել բրուցելողի մասին թուցիկ-
ներ, լոգոններ, մասսայական գիտական ըրոշյուրներ:

Այս համառոտ տեղեկությունները, վոր մենք տը-
գինք բրուցելողի վերաբերյալ, բավական են, վոր-
պեզի լայն մասսաները յուրացնեն այդ գիտելիքնե-
րը, կիրառեն այդ միջոցները և ոգնեն նրանց իրա-
դորձմանը:

Վորքան վոր անհույս և բրուցելողի դեմ պայ-
քարի խնդիրը կապիտալիստական յերկրներում, իր
անհատական սեփականատիլական տնտեսություն-
ներով, աշխատավորության շահերը անտես անելու
կարգերով, սղանային ձեռնարկումների բացակայու-
թյունով, այնքան մեզ մոտ այդ խնդիրը հնարավոր
է և կիրառելի:

Մեզ և հանձնված ամենաթանկադինը բոլոր գան-
ձերից, մեզ վրա յե գրված խնամքը մարդու առող-
ջության մասին: Առողջ հասարակակարդ ստեղծելու
համար մոտակա տարիներում պետք և արմատա-
խիլ անենք վարակիչ հիվանդությունները, նրանց
թվում նաև բրուցելող հիվանդությունը:

Առողջապահության և անասնաբուժության բնագա-
վառում աշխատողները պետք և ընդհանուր ուժերով
պայքարեն բրուցելող հիվանդությունը լիկվիդա-
ցիայի յենթարկելու համար:



ՀՀ Ազգային գրադարան



NL0286629

6626

ԳԻԱԸ 25 4.

Կ6403

С. АНАНЯН
Что такое бруцеллез
Гиз Арм. ССР, Ереван, 1940 г